

ժողովրդեան երեւակայութեան մէջ լուսաւոր հետք մը(\*) (L. S. S. էջ 64-7):

16.— Ս. Գերեզմանի Զատկի լոյսին մէկ աւանդութիւնը (870). — Բեռնարդոս վանական 870ին կ'այցելէ Երուսաղէմ. Ս. Գերեզմանի լոյսի մասին գրած է հետեւեալը. «Զատկի ճրագալուցին երբ Ս. Յարութեան Տաճարին մէջ, Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ պաշտամունքը կը սկսի, հրեշտակ մը կ'իջնէ. և կը լուսաւորուին Ս. Գերեզմանին շուրջը կախուած կանթեղները. պատրիարքը լոյսը կուտայ եպիսկոպոսներուն եւ մնացեալ ժողովրդեան, իւրաքանչիւր ոք լոյսը իր հետ ունենալով տուն կը վերադառնայ» (P. T. S. vol. III էջ 7):

17.— Ս. Գերեզմանի Զատկի նրագալուցի լոյսին աւանդութիւնը Սալահեսսինի օրով. — Ռիչարտ Թագաւորին Ուղեգրութեան մէջ կը կարգանք թէ «Զատկի ճրագալուցին Սալահեստին իր հետևորդներով Ս. Յարութեան տաճարը կը մտնէ վկայելու համար երկիրքէն իջած լոյսին, որ նոյն օրը, սովորութիւն կար, ամէն տարի, վառելու Սրբավայրին բոլոր կանթեղները: Անոր եկեղեցի մտած միջոցին երկնային լոյսը իջաւ և ներկայք խանդավառուեցան եւ քրիստոնեաները ուրախացան փառաբանելով Աստուծոյ մեծութիւնը: Բայց, ընդհակառակն, սարակինոսները ըսին թէ լոյսը խաբէական միջոցերով յառաջ եկած էր: Սալահեստին

(\*) Մեծն Կարոյոս ի սպիտակութիւն կատարած չէ, հաւանաբար ուխտագնացութիւն մը բրած է, համաձայն այս աւանդութեան, բայց այս աւանդութիւնն է որ պատմական իրականութիւն տուած է Միջին դարու քրիստոնէական խաչակրութեանց: